ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/60

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Աբելյանի պետական գրանցման վկայական թիվ 264.110.1093364),

քննելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գրենական պիտույքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ. ներկայացված (03.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/60 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.07.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար 2020թ. հունիսի 16-ին գրենական պիտույքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգը գնումների պաշտանական http://gnumner.am/ հայտարելուց հետո երկու անգամ կատարվել է հրավերի փոփոխություն՝ առանց հայտերի ներկայացման ժամանակը փոփոխելու: Նշված փոփոխություններից մեկը հրապարակվել է «ՓՈՓՈԽՎԱԾ Հայտարարություն և հրավեր ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» վերտառությամբ, իսկ մյուսը «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 2 Հայտարարություն և հրավեր «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20»՝ վերտառությամբ: Ի թիվս այլ մասնակիցների ընթացակարգին՝ 21-րդ չափաբաժնի մասով (թուղթ A 4) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Փեյփր հաուս» ՍՊ ընկերությունը: Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերների երկու տարբերակներում էլ սահմանված է, որ մասնակիցները գնային առաջարկում պետք է առանձին-առանձին ներկայացնեն «Ինքնարժեք /տառերով և թվերով/», «Շահույթ /տառերով և թվերով/», «ԱԱՀ /տառերով և թվերով/» և «Ընդհանուր գինը /տառերով և թվերով/», իսկ հրավերի երրորդ տարբերակում միայն նշված է, որ մասնակիցները գնային առաջարկում պետք է առանձին-առանձին ներկայացնենան «Արժեքը՝ (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/», «ԱԱՀ /տառերով և թվերով/» և «Ընդհանուր գինը /տառերով և թվերով/»:

«Փեյփր հաուս» ՍՊ ընկերությունը մասնակցության հայտում գնային առաջարկը ներկայացրել է առաջին երկու տարբերակներում նշված ձևով (կցվում է): Սակայն, գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 24-ին ժամը 14:00-ին կայացած N 2 արձանագրությամբ «Փեյփր հաուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ պատճառաբանելով «հավելված 2-ը՝ գնային առաջարկը, լրացված չէ հրավերի սահմանված պահանջներով»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկ:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական նորմերը, որոնց համադրումից ակնհայտ է դառնում, որ «Փեյփր հաուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում որևէ անհամապատասխանության առկա չէ, այսինքն՝ ներկայացված հայտում մեր ընկերությունը գնային առաջարկը ներկայացրել է բացվածքով, որտեղ նշված է ապրանքի ինքնարժեքը և ակնկալվող շահույթը:

Միաժամանակ ցանկանում են նշել, քանի որ «Փեյփր հաուս» ՍՊ ընկերությունը Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների թվում ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը, հետևաբար, հաղթող ճանաչվելու դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կտնտեսի շուրջ 1 130 360 (մեկ միլիոն հարյուր երեսուն հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. Չեղյալ համարել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գրենական պիտույքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով

գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 24-ի թիվ 2 արձանագրությունը, ինչպես նաև 2020թ. հունիսի 30-ին գնումների պաշտոնական կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Փեյփր հաուս» ՍՊԸ-ին՝ 4 587 500 ՀՀ դրամով ընթացակարգի 21-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելուն:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.07.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ս/թ հունիսի 16-ին կազմակերպել է գրենական պիտույքների և նյութերի գնման նպատակով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Համաձայն ՀՀ կառավարության մայիսի 21-ի թիվ 778-Ն որոշման պահանջների՝ ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Համաձայն կատարված փոփոխության՝ գնման ընթացակարգի մասնակիցը գնային առաջարկը պետք է ներկայացներ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Ի սկզբանե սույն պահանջը պահպանվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 5-րդ կետի 5.2 ենթակետով և 2-րդ մասի 2-րդ կետի 2.6 ենթակետով (Հրահանգ գնանշման հարցման հայտը պատրաստելու), սակայն, տեխնիկական վրիպակի պատճառով չի պահպանվել հրավերի 2-րդ հավելվածում (գնային առաջարկ), որտեղից կարելի է ենթադրել, որ բողոքաբեր անձը ամբողջությամբ չի ծանոթացել և չի կարդացել հրավերի բովանդակությունը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի կողմից տրված հունիսի 17-ի հաձնարարականի հիման վրա գնահատող հանձնաժողովի կողմից անցկացվել է արտահերթ նիստ, որի արդյունքում որոշվել է հրավերում կատարել փոփոխություն՝ շտկելով հավելված 2-ի (գնային առաջարկ) տեխնիկական վրիպակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերով նախատեսված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում ոչ մի փոփոխություն չէր կատարվել և ս.թ հուլիսի 1-ից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում սկսվող պլանային վերանորոգման աշխատանքների և այդ աշխատանքների վարչական մասը ապահովելու նպատակով առաջացած ձեռք բերվող գրենական պիտույքների և նյութերի խիստ անհրաժեշտությունը, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվեց անփոփոխ թողնել հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Ընթացակարգին մասնակցելու հայտեր էին ներկայացրել թվով տասնմեկ կազմակերպություններ՝ իսկ թիվ 21-րդ չափաբաժնով «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն և «Սմարթլայն» ՍՊԸ-ն:

Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի՝ 4-րդ ենթակետի և 32-րդ կետի՝ 2-րդ ենթակետի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստում «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի, Ա/Ձ Արտյոմ Վաչագանի Գալստյանի, Ա/Ձ Իրինա Մելքոնյանի, «Կոլլաժ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գրենական պիտույքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Փեյփր հաուս» ՍՊԸ-ն:

2. www.procurement.am կայքում 16.06.2020թ. հրապարակված Ընթացակարգի հրավերով սահմանվել է գնային առաջարկի՝ թիվ 2 Հավելվածի հետևյալ ձևը.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				

3. Ընթացակարգի շրջանակներում «Փեյփր հաուս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 Հավելվածով 21-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
21	Թուղթ A4	3 622 917 Երեք միլիոն վեց հարյուր քսաներկու հազար ինը հարյուր տասնյոթ	200 000 Երկու հարյուր հազար	764 583 Յոթ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր ութսուներեք	4 587 500 Չորս միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2020թ. նիստի թիվ 1.1 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ տեխնիկական վրիպակի պատճառով հրավերի հավելված 2-ում (գնային առաջարկ) նշված ինքնարժեքը և շահույթը ներկայացված է առանձին-առանձին, մինչդեռ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ համաձայն ՀՀ կառավարության մայիսի 21-ի թիվ 778-Ն որոշման, որտեղ հավելված 2-ում (գնային առաջարկ) նշված ինքնարժեքը և շահույթը անհրաժեշտ է ներկայացնել միասին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, քանի որ Հավելված 2-ը՝ գնային առաջարկը լրացված չէ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ն 21-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է առաջարկել կնքել պայմանագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի՝ 03.07.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 07.07.2020թ. ներկայացված դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը փոփոխություններ է կատարում հրավերում:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի

հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 3-րդ կետի 3.4 ենթակետով սահմանվում է՝ ***հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում:***

Հրավերի նույն մասի 3.6 ենթակետով սահմանվում է՝ ***հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:***

Այսպես՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գրենական պիտույքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Փեյփր հաուս» ՍՊԸ-ն:

www.procurement.am կայքում 16.06.2020թ. հրապարակված Ընթացակարգի հրավերով սահմանվել է գնային առաջարկի՝ թիվ 2 Հավելվածի հետևյալ ձևը.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				

Ընթացակարգի շրջանակներում «Փեյփր հաուս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 Հավելվածով 21-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
21	Թուղթ A4	3 622 917 Երեք միլիոն վեց հարյուր քսաներկու	200 000 Երկու հարյուր հազար	764 583 Յոթ հարյուր վաթսունչորս հազար	4 587 500 Չորս միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր

		հազար ինը հարյուր տասնյոթ		հինգ հարյուր ութսուներեք	

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2020թ. նիստի թիվ 1.1 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ տեխնիկական վրիպակի պատճառով հրավերի հավելված 2-ում (գնային առաջարկ) նշված ինքնարժեքը և շահույթը ներկայացված է առանձին-առանձին, մինչդեռ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ համաձայն ՀՀ կառավարության մայիսի 21-ի թիվ 778-Ն որոշման, որտեղ հավելված 2-ում (գնային առաջարկ) նշված ինքնարժեքը և շահույթը անհրաժեշտ է ներկայացնել միասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, քանի որ Հավելված 2-ը՝ գնային առաջարկը լրացված չէ հրավերով սահմանված պահանջների համապատասխան:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 3-րդ կետի 3.4 ենթակետի համաձայն՝ ***<u>հրավերում կատարված փոփոխությունները փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **<u>տեղեկագիրը</u> նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության <u>հրապարակման նպատակով</u> *<u>www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է</u>*.**

Անդրադառնալով Պատվիրատուի 07.07.2020թ. գրությամբ ներկայացվածին՝ այն, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի կողմից տրված հունիսի 17-ի հաձնարարականի հիման վրա գնահատող հանձնաժողովի կողմից անցկացվել է արտահերթ նիստ, որի արդյունքում որոշվել է հրավերում կատարել փոփոխություն՝ շտկելով հավելված 2-ի (գնային առաջարկ) տեխնիկական վրիպակը, արձանագրում եմ, որ տեղեկագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և տեղեկագրում հրապարակված հրավերում կատարված փոփոխության մասին հայտարարությունը: Հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերում կատարված փոփոխությունը իրականացվել է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ

կետի, Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի և հրավերի 1-ին մասի 3-րդ կետի 3.4 ենթակետի պահանջների խախտմամբ:

Ինչպես նաև Պատվիրատուն 17.06.2020թ հրավերում կատարելով փոփոխություն՝ այն 17.06.2020թ. հրապարակել է armeps.am/ppcm համակարգում՝ Փոփոխություն 2. հայտարարություն և հրավեր վերտառությամբ, սակայն Ընթացակարգին հայտեր ներկայացնելու նոր ժամկետ չի սահմանվել, ժամկետը շարունակել է հոսել 16.06.2020թ.-ից, մինչդեռ՝ թե՛ Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասը, թե՛ հրավերի 1-ին մասի 3-րդ կետի 3.6 ենթակետը հստակ սահմանում են, որ ***հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, ուստի արձանագրում եմ, որ նշված իրավական նորմերի պահանջները ևս խախտվել են Պատվիրատուի կողմից:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերում կատարված փոփոխությունը չի բխել գնումների մասին օրենսդրության պահանջներից, ուստի Ընկերության հայտը չի կարող գնահատվել փոփոխված հրավերի համաձայն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1.1 դադարեցնել 24.06.2020թ. նիստի թիվ 2 և 29.06.2020թ. թիվ 3 արձանագրությունները՝ 21-րդ չափաբաժնի մասով:

1.2 «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

2. Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-77/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Փեյփր հաուս»

ՍՊԸ-ին 4 587 500 ՀՀ դրամով ընթացակարգի 21-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելուն, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**